



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայաստան, 0025, Երևան, Կոթյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը լսելով միջազգային համագործակցության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, դոցենտ Ե.Ս.Սահակյանի «Համալսարանի միջազգային համագործակցության ընթացքը և հետանկարները» թեմայով զեկուցումը,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԵՊԲՀ միջազգային և արտաքին կապերի ոլորտի գործունեությունը գնահատել բավարար (18-02-02-01):
2. Հանձնարարել պրոռեկտոր, դոցենտ Ե.Ս.Սահակյանին.
 - 1) օտարերկրյա քաղաքացիներին ուսումնական գործընթացներում ներգրավելու նպատակով մինչև 2020 թվականի մայիս ամիսը համապատասխան գործունեություն ծավալել այլ երկրների իրավասու կառույցների կողմից համալսարանի կողմից տրվող որակավորումները ճանաչելու ուղղությամբ (18-02-02-02),
 - 2) նույն նպատակով մշտադիտարկել և վերլուծել կրթության բնագավառի միջազգային զարգացումները, նրանց համապատասխան յուրաքանչյուր տարի մինչև 2020 թվականը կիրառել համագործակցության և արտաքին կապերի արդյունավետ մեխանիզմներ ու ժամանակացույց (18-02-02-03),
 - 3) համալսարանում սփյուռքահայ ուսանողների ուսուցման 60 ամյակը և օտարազգիների ուսուցման 30 ամյակը 2018 թվականի հոկտեմբերին նշելու համար մինչև 2018 թվականի մայիս ամիսը ներկայացնել միջոցառումների ծրագիր: Այն ներառել համալսարանի 100-ամյակին ընդառաջ կազմակերպվող միջոցառումների ցանկում (18-02-02-04),
 - 4) ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆ. Լ.Ռ.Ավետիսյանի, կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆ. Ա.Ս.Մինասյանի, գիտության գծով պրոռեկտոր պրոֆ. Կ.Բ.Շնկոյանի, հետբուհական և շարունակական ուսուցման գծով պրոռեկտոր դոց. Գ.Ա.Ավետիսյանի հետ համատեղ օտարերկրյա համալսարանների հետ համագործակցության ոլորտում մեծացնել ուսանողների, դասախոսների փոխանակային, մասնագիտական կատարելագործման, համատեղ հետազոտություններ իրականացման մասնաբաժինները (18-02-02-05):
3. Համալսարանի պաշտոնական ինտերնատային կայքի «Միջազգային» դարանում մինչև 2018 թվականի ապրիլ ամիսն ընդլայնել անհրաժեշտ տեղեկատվությունը, կիրառել տեղեկատվության հնարավոր այլ միջոցներ (18-02-02-06):
4. Մինչև 2018 թվականի ապրիլի 20-ը ներկայացնել առաջարկություններ՝ հանրակացարանում բնակվող ուսանողների կենցաղային և բնակության պայմանները բարելավելու ուղղությամբ (18-02-02-07):
5. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆ.Լ.Ռ.Ավետիսյանին՝ մինչև 2018 թվականի մայիսի 15-ը ներկայացնել տեսական բժշկության ամբիոնների ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը միտված անհրաժեշտ սարքավորումների վերաբերյալ համապատասխան պահանջագրեր և մինչև նոր ուսումնական տարվա սկիզբն ապահովել դրանց ձեռքբերումը (18-02-02-08):
6. Հաստատել 2016 թվականի ապրիլի 29-ի «Ստանդան վճարի չափերի մասին» թիվ 6 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին գիտական խորհրդի որոշումը (կցվում է) (18-02-02-09):
7. Որոշումների կատարման իսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ.,ՊՐՈՖ.Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ.,ՊՐՈՖ.Տ.Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆ